

կ'երթայ Սկիւտար. «Սուլիմանասարոյ ամենայն քահանայքն եւ իմ Երեմիաս եւս եկաւ» (Օրագր. թղ. 40բ): — 1691 Նոյ. 5ին կը յուշագրէ. «Երեմիա Քօմուրնիզասէն առ մեզ» (թղ. 152ա): — Նոյն տարուան Նոյ. 30ին. «Մեր Երեմիային մին Յիսուս Որդի, մին Ժամագիրք պաշխեցի» (թղ. 153ա):

Ս. Էջմիածինէ վերագարձին (1686) Երեմիա տեսնելով ազգային-եկեղեցական գործերը խանգարուած՝ մեկուսացեալ կեանք մը կ'ապրի աշուհէտէ: Իր յառաջացեալ տարիքը ու երկու զաւակներուն՝ Սողոմէ աղջկան ու Գրիգորիս վարդապետ որդւոյն մէկը միւսին հտեւէն վաղաժամ մահերը, որոնց պիտի անդրադառնանք ետքէն, բոլորովին կ'ընկճեն զինք, ու ան գրեթէ այլեւս հեռու կը մնայ հասարակական կեանքէ:

«Իրօք ալ լռեց Երեմիա, կը գրէ Հ. Ակինեան: Այս թուականէն (1686) յետոյ չենք տեսներ զինքը հրապարակի վրայ. ապրեցաւ իր գիրքերուն մէջ»⁽¹⁾:

Եւ յիշաւի Երեմիա իբրեւ մատենագիր եւ մատենասէր ու զարգացումով գերազանցապէս բարձր իր ժամանակակիցներէն՝ չէր կրնար հեռու ապրիլ իր գիրքերէն, նոյն իսկ այն ատեն՝ երբ դժխեմ բախտը կը խլէր իրմէն իր երկու զաւակները իրենց ծաղիկ հասակին մէջ ու անհնարին սուգի եւ սրտաբեկութեան կը մատնէր զինք:

Երեմիայի մատենասիրութեան իբրեւ ապացոյց առաջ բերենք հետեւեալ երկու գրուագիւնները:

ա. Իր քահանայ հօրմէն մնացած ձեռագիր հնամակ Շարակնոց մը նորոգել տալով կը նուիրէ Գրիգոր Զէլէպիի՝ թուրքերէն Ուղերձով մը (Յաւել. էջ 578-579), որու մէջ քանի մը չափածոյ տողերով նկարագրելէ ետք Զեռագիրը, կ'աւելցնէ՝ թէ որքան որ ա-

(1) Հ. Ն. Ակինեան, Զէլէպի, էջ 57: